ԱՐՑԱԽԻ ՊԱԼԱՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ՀՈՒՇԱՐՁԱՆ

ԱՐՏԱԿ ՂՈՒԼՅԱՆ

Պատմական Արցախի քաղաքացիական ճարտարապետությունը միջնադարյան հայկական ճարտարապետության սակավ ուսումնասիրված բնագավառներից է։ Մասնագիտական գրականության մեջ անբավարար են լուսաբանված հատկապես երկրամասի ուշ շրջանի մելիքական ապարանքները (ամարթները), որոնց բազմաթիվ ավերակներ և մնացորդներ պահպանվել են նախկին մելիքական նստավայրերում։ Այդպիսիք են՝ Գյուլիստանի Մելիք-Բեգլարյանների ապարանքը Հոռեկա կամ Գլխո վանքի մոտ, Աբրահամ Սպարապետի ժառանգներինը՝ Գյուլիստան գյուղում, Ջրաբերդի Մելիք-Իսրայելյանների երկու ապարանքները Մաղավուզ և Մոխրաթաղ գյուղերի մոտ, Մելիք-Ալավերդյաններինը՝ Գյուլաթաղ գյուղում, Վարանդայի մելիքների մի քանի ապարանքները Ջանախչիում, Ավան Սպարապետինը՝ Սղնախում, Դիզակի մելիք Եգանինը՝ Տողում և այլն։ Այստեղ կանդրադառնանք հիշյալ ապարանքներից երկուսին։

Մելիք-Բեգլարյանների ապարանքի ավերակները *(գծ. 1) գտնվում են Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղից 5—6 կմ արևմուտք՝ անտառապատ բլրի հյուսիսային լանջին. բլրի հարավային՝ բարձրադիր մասում նշանավոր Հոռեկա վանքն է, իսկ հանդիպակաց լանջին՝ հավանաբար նույնատիպ մի այլ շինության մնացորդները։ Ապարանքի կառուցման վերաբերյալ հավաստի տեղեկություններ հայտնի չեն։ Ավանդաբար այն վերագրվում է Գյուլիստանի Մելիք-Բեգլարյաններին և հիշվում XVIII դ. սկզբի իրադարձությունների առնչությամբ[1]։ Այդ առումով ուշագրավ է ապարանքի դիմաց գտնվող շինության կառուցմանը վերաբերող (1727 թ.) արձանագրության հիշատակությունը[2]։ Ապարանքի շրջապատում գտնվող մելիքական տոհմի ներկայացուցիչների տապանաքարերը ևս հիմք են տալիս ասելու, որ ապարանքը կառուցել են Մելիք-Բեգլարյանները՝ XVIII դ. սկզբին։*

Ապարանքի ուղղանկյուն պարսպապատ ամբողջությունն ունի թեթև արտահայտված արևելք-արևմուտք ձգվածություն[3]։ Պահպանվել են ապարանքի հարավային կողմի կիսագետնափոր սենյակները, հյուսիսային կողմի սենյակների մնացորդները, արևմտյան պարսպապատը և հյուսիսայինի մի մասը՝ անկյունային բուրգով։ Հյուսիս-արևելյան մասի պարսպապատերը ամբողջովին ավերված են։ Լանջի թեքության պատճառով սենյակների հարավային խումբը փոքր-ինչ բարձր է հյուսիսայինից։

---

1 Մ. Բարխուտարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 230, նույնի՝ Պատմություն Աղվանից, հ. 2, Թիֆլիս, 1907, էջ 38, Լեո, Հայոց պատմություն, հ. 3, գիրք 2, Երևան, 1973, էջ 259, Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1959, էջ 172։

2 Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 1963, էջ 590—592։ Այստեղ Բաֆֆին նաև կասկած է հայտնում ապարանքի՝ ավելի վաղ կառուցված լինելու մասին։

3 Ապարանքի չափագրությունները առաջին անգամ հրատարակել է Ն. Ծ. Պապուխյանը (տե՛ս Ն. Ծ. Պապուխյան, Ձայրվող ծածկերով բնակարանների դերը և տեղը Հայաստանի հին և միջնադարյան ճարտարապետության մեջ («Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում», հ. 2, Երևան, 1981, էջ 330—340)։

Ապարանքի հարավային թևը բաղկացած է մի գծով դասավորված չորս սենյակից, բակի կողմից դրանց ողջ երկարությամբ ձգված սրահից և սրահի ու սենյակների լայնությունը բռնող՝ կրկնակի շարքով դասավորված չորս այլ սենյակից։ Իրենց մեծությամբ ու ծավալային հորինվածքով այս խմբի աչքի ընկնող շինությունները սրահավոր մասի կենտրոնում գտնվող քառակուսի հատակագծով (7,0×7,0 մ) զույգ գլխատներն են, որոնց գմբեթները չեն պահպանվել. շրջանագծային հիմքից վերև մնում են 2—3 շարքերի կանոնավոր քարերը, որոնցով կարելի է պատկերացում կազմել գմբեթի սկզբնական բարձրության և հորինվածքի մասին։

Գլխատան անսյուն ծածկը, որը ժողովրդական բնակարաններում սովորաբար լինում է փայտից և կիրառվում է ոչ մեծ տարածություններ ծածկելու համար, այստեղ վերամարմնավորվելով քարակերտ գմբեթի, ստացել է համարձակ և ինքնատիպ լուծում։ Ի տարբերություն ոչ հեռու գտնվող Մելիք-Խաչատրյանների Մոխրաթաղի ապարանքի (1771 թ.), և Գանձասարի վանքի մոտի գլխատների[4], որոնք ունեն տրոմպային փոխանցումով ութանիստ գմբեթներ, Մելիք-Բեգլարյանների ապարանքի գմբեթները եղել են կիսագնդաձև. գմբեթատակ քառակուսուց 2,7 մ բացվածքով անկյունային տրոմպների միջոցով անցում է կատարված ութանկյուն հիմքին և ապա՝ պատի հաստության հաշվին՝ շրջանագծային գմբեթին։ Դրա հետևանքով բուն գմբեթի կանոնավոր շարքերը սկսվում են տրոմպների վերին եզրից որոշ բարձրության վրա։ Գլխատների քարակերտ գմբեթներում ակնառու է փայտե նախորինակի՝ ավանդական հազարաշենի ազդեցությունը, որը, սակայն, բերել է ոչ թե փայտե ձևերի անմիջական փոխառության, այլ հանգեցրել է քարին բնորոշ հորինվածքների[5]։ Ուշագրավ է, որ զույգ գլխատները կառուցվել են կողք-կողքի, ճիշտ նույն չափի ու ձևի և հաղորդակցվել են ոչ մեծ դռան միջոցով։ Գլխատների երդիկավոր գմբեթները անցյալ դարի վերջերին դեռևս կանգուն են եղել և արժանացել են այցելուների ուշադրությանը[6]։

Գլխատների երկու կողմերին կից են թաղակապ սենյակները, որոնցից արևելյանի ծածկը ամբողջովին պահպանվել է։ Դրանք հատակագծային լուծմամբ և ներքին հարդարանքով հիշեցնում են ավանդական գոմի օդաները. երկարավուն սենյակների մուտքերի հանդիպակաց լայնական պատերի կենտրոնում բուխարիներն են՝ երկու կողմերի կամարակապ խորշերով, որպիսիք կան և մյուս բոլոր պատերի վրա։ Նման լուծմամբ սենյակներ շատ են Արցախի և Սյունիքի ժողովրդական բնակելի տներում, մելիքական ապարանքներում, վանքապատկան բնակարաններում[7]։

Պահպանվել են նաև կամարասրահի մույթերի, թաղի ու կամարների մնացորդները, որոնցից երևում է, որ այն ծածկված է եղել քառակուսի կտրվածքով (0,95×0,95 մ) յոթ մույթերի վրա հենվող գլանաձև թաղով։ Վերջինս թաղակիր կամարով բաժանված է եղել երկու մասի[8]։ Ժողովրդական բնակելի տներում հանդիպող գլխատան փայտե սյունավոր նախամուտքն այստեղ ներ-

---

4 Տե՛ս Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 218, Հ. Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 2, Վենետիկ, 1903, էջ 70։

5 Վ. Մ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի մոնումենտալ աշխարհիկ ճարտարապետության ձևաստեղծման ժողովրդական ակունքները («Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 4, էջ 62)։

6 Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 230, Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 591։

7 Ն. Ե. Պապոյան, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, 1972, էջ 68, Մ. Մ. Հասրաթյան, Սյունիքի XVII—XVIII դդ. ճարտարապետական համալիրները, Երևան, 1973, էջ 99։

8 Այդ «ութաչեաց» կամարասրահը կանգուն էր անցյալ դարի վերջերին (տե՛ս Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 230)։ Հիշարժան է, որ ըստ Ռաֆֆու, այն ուներ ոչ թե յոթ, այլ՝ ութ մույթ (տե՛ս Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 591)։

կայանում է որպես ընդարձակ ու հանդիսավոր կամարասրահ, որը կարող էր ծառայել նաև ամառային բնակության համար և որով պետք է բացատրել երկայնական պատի վրա զույգ կամարակապ խորշերի ու արևմտյան պատում՝ բուխարու գոյությունը։

Արևելյան կողմի սենյակները կամարասրահի հետ կապվում են մի թաղակապ սենյակի միջոցով։ Վերջինս լուսավորվում է բակահայաց երկու պա-



Գծ. 1. Մելիք-Բեգլարյանների ապարանքը (չափագրությունը՝ Ա. Բ. Ղուլյանի)։

տուհաններով, որոնց միջև գտնվում է կամարակապ խորշ՝ կիսավեր բուխարիով։ Այդտեղից մուտք է բացվում դեպի մի այլ՝ փոքրաչափ ու ցածր թաղակապ սենյակ, որը նույնպես ունի բուխարի՝ զույգ խորշերով։ Դրան արևմտյան կողմից կից է մի փոքր, թաղակապ սենյակ, իսկ հյուսիսից՝ հատակագծում քառակուսի այլ սենյակ, որն ունի երկու լուսամուտ և մուտք նաև բակի կողմից։ Այս սենյակի հատակը 1,5 մ ցածր է սենյակների հիմնական խմբի ընդհանուր մակարդակից։ Ի տարբերություն մյուս սենյակների կիսագլանաձև թաղերի, այն ծածկվել է երդիկավոր գոցվող թաղերով, որոնցից պահպանվել են ստորին շարքերի կանոնավոր քարերը։

Ներքին բակը, որպես ժողովրդական բնակելի տան ավանդական մաս, կարևոր դեր է ունեցել համալիրի հորինվածքում. դրա միջոցով է կատարվել ապարանքի երկու թևերի կապը միմյանց և դրսի հետ։ Արևմուտքից բակի երկայնական առանցքի ուղղությամբ կա մուտք[9]։

Հյուսիսային թևում պահպանվել են սենյակների երկայնական պատերի մի մասը և ծածկի թաղի հիմնաքարերը։ Ըստ այդ մնացորդների, երկարավուն տարածությունը երկու լայնական պատերով բաժանվել է երեք մասերի։ Եթե երկու եզրային մասերի հորինվածքը պահպանված մնացորդներով որոշակի է, ապա համապատասխան մնացորդների բացակայության հետևանքով հայտնի չէ, թե կենտրոնականի հարավային կողմում ծածկի թաղը ինչի վրա

[9] Հավանաբար մուտք է եղել նաև հանդիպակաց արևելյան պարսպապատում։

է հենվել[10]։ Ենթադրելի է, որ ծածկը հենվել է մույթերի վրա, այսինքն այն կա եղել է կամարակապ սրահ։ (Ի դեպ, նման լուծման դեպքում մեկ կենտրոնական և երկու եզրային մույթերի միջոցով ստացված կամարային բացվածքները ճշտորեն համընկնում են հանդիպակաց կամարասրահի բացվածքներին։ Նկատենք, որ այդ մասը Բաֆֆու մոտ նշվում է, որպես «երեսը բաց սրահ»)[11]։

Երկու եզրային սենյակները գրեթե նույն չափի են, որոնց լայն պատուհանները՝ բակի կողմից և ներքին կամարակապ խորշերը վկայում են, որ այդ սենյակները ունեցել են կարևոր դեր։ Դրանց շարունակությունը արևելյան ուղղությամբ, որտեղ տեղանքը ցածր է, չի կառուցապատվել։ Այդ են վկայում նույն կողմից բացված զույգ նեղլիկ պատուհանները։

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ ապարանքի հատակագծային լուծումը հիմնականում ենթարկված է հայկական ժողովրդական բնակելի, այսպես կոչված, կոմպլեքս տիպի տան հատակագծային հայտնի սկզբունքներին[12]։

Մելիք-Բեգլարյանների ապարանքի երկու դլխատները, ունենալով ֆունկցիոնալ կարևոր նշանակություն, գերիշխող դեր են ունեցել նաև հատակագծային ու ծավալատարածական հորինվածքում։ Ապարանքը մի նոր որակական աստիճան է ժողովրդական բնակարանի ճարտարապետության զարգացման ճանապարհին և այս նորահայտ տիպի՝ բարակերտ գլխատնային ճամալիրի բնորոշ օրինակ է։

Ապարանքի ինքնատիպ ճարտարապետական հորինվածքում ժողովրդական բնակելի տան շինարարական դարավոր ավանդույթները միահյուսվել են դարաշրջանի պաշտպանական կառուցվածքների կառուցողական սկզբունքների հետ՝ պայմանավորված տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական իրավիճակով։ Ապարանքի ներկա վիճակը և մեզ հասած տեղեկությունները վկայում են, որ այն ունեցել է ուղղանկյուն պարագծով պարիսպ՝ դիտանցքավոր անկյունային բուրգերով։ Պայքարը ներքին և արտաքին թշնամիների դեմ, ազգային-ազատագրական շարժումները ստիպել են ապարանքի հորինվածքում հաշվի առնել նաև պաշտպանական խնդիրները։ Պարսպապատերին կից սենյակների դասավորությունը ներքին բակի շուրջը՝ պայմանավորված է ինչպես պարսպապատ տարածքի նպատակահարմար օգտագործմամբ, այնպես էլ պաշտպանական նկատառումներով։ Ապարանքի շինությունների սակավաթիվ պատուհանները բացվում են բակի կողմից։ Անկյունային բուրգի միակ պատուհանը «հսկում է» լեռներից իջնող ճանապարհը։ Նույնպիսի մի բուրգի և մի քանի թաղակապ սենյակների մնացորդներ են պահպանվել ապարանքի դիմացի հիշատակված շինությունից։

Միաժամանակ ակնառու է ապարանքի որոշ մասերի հորինվածքային աղերսը ավելի վաղ շրջանի պալատական (Դվին, Արուճ, Զվարթնոց) և աշխարհիկ (գավիթներ, սեղանատներ, գրատներ) ճարտարապետության հուշարձանների հետ, որը առանձին ուսումնասիրության խնդիր է։

Մելիք-Բեգլարյանների ապարանքը իր հիմնական՝ բնակելի ֆունկցիայով հանդերձ, միաժամանակ պալատ-ամրոց է և դարաշրջանի պաշտպանական կառույցի նոր տիպ՝ բերդերի ու վանք-ամրոցների կողքին։

Աբրահամ Սպարապետի ժառանգների ապարանքը (գծ. 2) նախորդի համեմատ լավ է պահպանվել։ Այն գտնվում է Ադրբեջանական ՍՍՀ Շահումյանի շրջանի Գյուլիստան գյուղում։ Կառուցված լինելով գյուղի կենտրոնում, ապարանքը ցայսօր չի լքվել, այժմ այնտեղ և դրան հետագայում կցված սենյակներում ապրում են ապարանքի տերերի շառավիղները՝ Սեփյանները։ Ապարանքի կառուցման մասին շինարարական արձանագրություն կա արևմուտքից

---

10 Սրահի և սենյակների ճիշտ նման դասավորություն ունի Մելիք-Իսրայելյանների՝ Մոխրաթաղ գյուղի մոտ գտնվող ապարանքի հարավային թևը։

11 Բ ա ֆ ֆ ի, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 591։

12 Ս. Վ ա ր դ ա ն յ ա ն, Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետություն, Երևան, 1959, էջ 43, 70։

գլխատանը կից սենյակի մուտքի բարավորի վրա, ըստ որի այն կառուցվել է 1782 թ[13]։

Ապարանքը սկզբնապես բաղկացած է եղել մեկ գլխատնից և դրան երկու կողմից կից մեկական թաղակապ սենյակներից, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է առանձին ծածկված նախամուտք։ Լանջի վրա կառուցված այդ սենյակները կիսագետնափոր են և երկայնական ճակատով բացվել են բակի կողմը։ Այժմ այդ ճակատը ևս քողարկված է հետագա հավելումներով. նախամուտքերը վեր են ածվել սենյակների և ամբողջ հարավային ճակատի երկարությամբ, հավանաբար միաժամանակ, ավելացվել է փայտե սյունավոր պատշգամբ։ Հետագայում պատշգամբի որոշ մասերը հեռացվել են և ապարանքի հարավ-արևելյան կողմից կառուցվել են նոր սենյակներ։



Գծ. 2. Արրահամ Սպարապետի ժառանգների ապարանքը (չափագրությունը՝ Ա. Բ. Ղուկասյանի)։

Հատակագծում քառակուսի (7,1×7,1 մ) գլխատան ծածկը իրականացված է երդիկավոր, քարակերտ գոցվող թաղերով։ Վերջիններս՝ չնայած որոշ չափով քանդված են, բայց դրանց այժմյան վիճակը լրիվ պատկերացում է տալիս գմբեթի սկզբնական ձևի մասին։ Գլխատան նույնատիպ գմբեթը ճշտությամբ կրկնվում է դրանից մեկ տարի ուշ (1783 թ.) Տեղ գյուղում կառուցված մելիք Բարխուդարի ժառանգների ապարանքի զույգ գլխատներում[14]։ Գմբեթի նման լուծումը կարելի է համարել անսյուն գլխատան քարակերտ ծածկի մի նոր տարբերակ։ Ինչպես տեսանք, այդպիսի ծածկ է ունեցել նաև Մելիք-Բեգլարյանների վերոհիշյալ ապարանքի մի սենյակը։

Գլխատունն ուշագրավ է նաև իր մանրամասներով։ Սրբատաշ քարով են շարված կամարակապ խորշերի և մուտքի եզրամասերը, թաղերի անցման սահմանում գտնվող որմնագոտին։ Մեջից սևացած պատերն ու առաստաղը վկայում են երբեմնի օջախի գոյության մասին։ Գլխատնից մուտքեր կան դեպի եզրային, թաղակապ սենյակները, որոնք գրեթե միաչափ են, ետևի պատում ունեն բուխարի և կամարակապ խորշեր։ Այդ մուտքերը հետագայում կիսով չափ փակվել են՝ օգտագործվելով որպես պահարանախորշեր։ Արևելյան սենյակի մյուս եզրային մուտքը բացվել է հետագայում, իսկ արևմտյանի երկու լայն պատուհաններն ու մուտքը ուղղված են բակի կողմը։ Ապարանքի հարավային կողմում պատի պահպանված մի փոքր հատվածը հիմք է տալիս ասելու, որ բակը նախապես եղել է պարսպապատ։

Գլխատան և թաղակապ շինությունների նախամուտք-սենյակների հարավային պատերը կառուցվածքային կապ չունեն լայնական պատերի հետ։ Դա վկայում է, որ այդ սենյակները ի սկզբանե եղել են նախամուտքեր՝ բա-

---

13 Կ. Ղահրամանյան, Նյութեր Գյուլիստանի մելիքության պատմության վերաբերյալ (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1979, № 12, էջ 116)։ Այստեղ բնագրի ՌՄԼԱ (1782)-ը սխալմամբ կարդացված է ՌՄԱ (1752)։

14 Ն. Ծ. Պապուխյան, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, էջ 69։

ժանված լայնական, անտային պատերով։ Այդ մասին են խոսում նաև իրենց ձևով ակնհայտորեն որպես արտաքին մուտքեր կառուցված գլխատան և թաղակապ շինությունների ճակատային գոները։

Արևմտյան սենյակի նախամուտքի թաղի մի մասը պարզ արտահայտված է նաև ճակատում։ սա ցույց է տալիս, որ նախամուտքն ունեցել է իր լայնության չափով կամարային բացվածք։ Մյուս երկու նախամուտքերն այժմ ունեն փայտե հարթ ծածկ։ Արևելյան սենյակի մուտքի վերևի լուսամուտի՝ ներկայումս փակված լինելուց ակնհայտ է, որ նրա նախամուտքը ևս եղել է թաղածածկ՝ մեկ կամարային բացվածքով։ Նման պայմաններում խիստ հավանական է դառնում, որ գլխատան նախամուտքը ևս ունեցել է կամարակապ թաղածածկ։

Ապարանքի հատակագծման սկզբունքը նույնն է, ինչ որ նախորդինը։ Այստեղ էլ բնակելի, կիսագետնափոր սենյակներն ունեն միագիծ դասավորություն, որի մեջտեղում գլխատունն է, եզրերում մեկական սենյակ և դրանց ճակատի ողջ երկարությամբ՝ նախամուտքը։ Ընդհանրությունն արտահայտվել է նաև ծածկերի հորինվածքում՝ փայտե կոնստրուկցիաների փոխարեն քարի կիրառությամբ։ Ապարանքն իր ճարտարապետական նկարագրով նույնպես fառակերտ գլխատնային համալիր է (համեմատաբար փոքր չափերի) և ի տարբերություն նախորդ ապարանքի, հավանաբար, չի ունեցել պաշտպանական նշանակություն։

Այսպիսով, Գյուլիստանի մելիքական այս երկու ապարանքների ճարտարապետությունը, հիմնականում իարսխվելով երկրամասի ժողովրդական բնակարանի կառուցողական ավանդույթների վրա, որոշակիորեն պայմանավորվել է նաև իշխանական (մելիքի, սպարապետի) կյանքի և կենցաղավարման առանձնահատկություններով, ավելի մոնումենտալ շենք ունենալու կառուցողների ձգտումով, որոնք էլ հանգեցրել են ժողովրդական բնակարանների փայտե մասերի հանրահայտ ձևերի քարով վերամարմնավորմանը։

ДВА ПАМЯТНИКА ДВОРЦОВОГО ЗОДЧЕСТВА АРЦАХА

АРТАК ГУЛЯН

Резюме

В средневековой гражданской архитектуре Армении заметное место занимают меликские дворцовые здания позднего периода исторического Арцаха, которые мало изучены и недостаточно освещены в специальной литературе.

Рассматриваются два дворца XVIII в., построенные наследниками гюлистанских Мелик-Бегларянов и Абраама Спарапета. Композиционным ядром обоих дворцов является квадратный в плане глхатун. Традиционное деревянное перекрытие глхатуна—«казарашен»—получило разные решения в каменных конструкциях: в виде полусферического купола с тромповым переходом и в виде сомкнутого свода. Все остальные помещения дворцов (сводчатые жилые и подсобные комнаты, арочные галереи и пр.) также имеют свои прототипы в традиционном народном жилище горных районов Армении. В целом являясь монументальной вариацией народного жилого, так называемого комплексного, дома, дворцы одновременно представляют новонайденный тип комплекса каменного глхатуна. В решении дворца Мелик-Бегларянов нашли отражение социально-политические черты времени, выразившиеся в создании дворца-крепости.